

• Հիփոթեքային վարկեր

Անվանում	Հիփոթեքային վարկեր՝ ՀՀ սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում
Տեսակ	Հիփոթեք
Նպատակ	Սահմանամերձ և առանձին բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու / կառուցապատումը շարունակելու նպատակով
Գումարի չափ/միջակայք	2,000,000 – 21,000,000 ՀՀ դրամ
Աջակցության սահմանաչափեր	- Աջակցության չափը կազմում է հիփոթեքային վարկով անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) դեպքում հիփոթեքային վարկի մայր գումարի ամսական վճարների մարման համար՝ հանրագումարային մինչև 16.0 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 277.0 հազ. դրամ, իսկ տոկոսագումարների մարման համար՝ մինչև 13%, հանրագումարային մինչև 12.668 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 203.0 հազ. դրամ, - Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց և Ոսկեպար բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում աջակցության չափը հիփոթեքային վարկի մայր գումարի ամսական վճարների մարման համար կազմում է հանրագումարային մինչև 21.0 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 366.0 հազ. դրամ, իսկ տոկոսագումարների մարման համար հաստատուն տոկոսադրույքով վարկավորման դեպքում՝ մինչև 13%, հանրագումարային մինչև 16.626 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 266.0 հազ. դրամ:
Արժույթ	ՀՀ դրամ
Ժամկետ	120
Վարկի անվանական տոկոսադրույք՝	13%
Վարկի փաստացի տոկոսադրույք	0.01% - 0.15%
Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ	$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{\left(1 + i\right)^{\frac{D_n}{365}}}$
Անվանական տոկոսադրույքի փոփոխման կարգ և պայմաններ՝ նախատեսելու դեպքում	չի սահմանվում
Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ և դրանց չափ/միջակայք	չի սահմանվում:
Երրորդ անձանց կողմից մատուցվող օժանդակ ծառայություններ	Անշարժ գույքի գնահատում,

Վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները	Վարկառուն և գրավատուն, հայտի ներկայացման օրվա դրությամբ չպետք է ունենան գործող ժամկետանց և ստանդարտ դասից ավելի խիստ դասով դասակարգված պարտավորություններ
Մարումների հաճախականություն	ամսական
Մարումների եղանակ	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ
Ապահովության (գրավի) տեսակ	- Կառուցապատվող գույքը - Սահմանամերձ և Առանձին բնակավայրերում ընդգրկված գույք
«վարկ հարաբերած գրավի արժեք»	-
Ապահովագրության պահանջի առկայություն	ոչ
Նվազագույն կանխավճար	-
Տույժերի կիրառման դեպքերը և չափը	երկու և ավելի հաջորդող աշխատանքային օր ժամկետանցի դեպքում ժամկետանց գումարի 2%-ի չափով միանվագ տույժ
Վարկի գումարի տրամադրման եղանակներ	անկանխիկ
Վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները	Հնարավոր է՝ առանց տույժերի
Վարկի ձևակերպման վայր	Մասնաճյուղ
Որոշման կայացման և որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ	Որոշման կայացման առավելագույն ժամկետ - 4 օր Որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ - 1 օր
Վարկը սպառողի տրամադրելու կարգ և ժամկետ	Պայմանագիրը պետական գրանցում ստանալուց 1 օր հետո
Դրական որոշման գործոններ	Վարկառուն և գրավատուն, հայտի ներկայացման օրվա դրությամբ չպետք է ունենան գործող ժամկետանց և ստանդարտ դասից ավելի խիստ դասով դասակարգված պարտավորություններ
Բացասական որոշման գործոններ	գործող ժամկետանց և ստանդարտ դասից ավելի խիստ դասով դասակարգված պարտավորություններ
Այլ պայմաններ	- Շահառուն կարող է օգտվել աջակցության սույն ծրագրից՝ անկախ բնակարանային ապահովության պետական աջակցության այլ (եկամտահարկի վերադարձի, երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության) ծրագրերից օգտվելու հանգամանքից, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված ծրագրի: - Եթե առկա է վարկավորման նախորդ փուլում վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման մասին տեղեկություններ, ապա Ծառայությունը դադարեցնում է ժամանակացույցով նախատեսված հաջորդող ամիսների Աջակցության գումարները: Աջակցության գումարների փոխանցումները վերականգնվում են՝ Գործընկեր կազմակերպության կողմից վարկավորման նախորդ փուլում վարկային միջոցների նպատակային օգտագործման մասին հավաստում ստանալուց հետո:

	Բանկի կողմից փաստացի տրամադրված գումարները շահառուի կողմից փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով ենթակա են վերադարձման պետությանը հետևյալ դեպքերում՝ • Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի (վարկառուի) մահվան դեպքում, եթե շահառուի ժառանգը շահառուի ամուսինը կամ երեխան չէ: • Բանկի հետ վարկային պայմանագրի կնքման օրվանից 3 տարվա ընթացքում շահառուի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտական ակտը Բանկ չներկայացվելու դեպքում:» • Համաձայն աջակցության ծրագրի՝ փուլային տրամադրման ընթացակարգը խախտելու դեպքում: Սույն ծրագրով նախատեսված աջակցությունն ամբողջությամբ դադարում է հետևյալ դեպքերում. • հիփոթեքային վարկի ամբողջական մարման դեպքում, • հիփոթեքային վարկի գործողության ընթացքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց անունով գրանցելու դեպքում (անկախ բաժնեմասի չափից), • հիփոթեքային վարկի գործողության ընթացքում տվյալ վարկի գծով 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում, • պետության կողմից կատարված ամենամսյա մարումների հանրագումարային արժեքի սահմանված չափը լրանալու դեպքում:
--	---

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Վարկառուի կողմից ներկայացվող փաստաթղթեր. 1. Դիմում /սահմանված ձևով/, 2. Անձնագիր կամ նույնականացման քարտ, 3. Սոցիալական քարտ, 4. Ամուսնության վկայական /եթե վարկառուն ամուսնացած է/, 5. Երեխաների ծննդյան վկայականները /առկայության դեպքում/, 6. Տեղեկանք բնակության վայրից /3-րդ ձև ԲՇՏ-ից/, Եթե վարկառուն վարձու աշխատող է, ապա. 7. Եկամուտների մասին տեղեկանք գործատուից, որտեղ նշվում է վարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսական եկամտի չափը 8. Տվյալներ նախկին զբաղվածության մասին՝ գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը /պահանջվում է միայն այն դեպքում, եթե վարկառուի աշխատանքային ստաժը ընթացիկ աշխատավայրում փոքր է 12 ամսից և դա նրա առաջին աշխատավայրը չէ/. 9. Տվյալներ այլ եկամուտների վերաբերյալ /առկայության դեպքում/, 10. Վարկառուի ամուսնացած լինելու դեպքում ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք ոչ պարտադիր/, Եթե Վարկառուն ինքնազբաղված է, ապա. 11. Հարկ վճարողի հարկային համարը /ՀՎՀՀ/, 12. Գրանցման վկայական, կանոնադրություն /առկայության դեպքում/, 13. Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը, եթե օրենսդրության համաձայն տվյալ
--	--

	գործունեության համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվություն, 14. Վերջին 1 տարվա ֆինանսական և հարկային հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կողմից, 15. Վերջին 12 ամսվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունները /գրառումները /առկայության դեպքում/ 16. Ինքնազբաղվածների եկամուտների գնահատման վերլուծություն համաձայն ՈՆՍ-ի Հավելված 1-ում ներկայացված ինքնազբաղվածների եկամուտները գնահատելու մեթոդաբանության կամ ԳՖՀ կողմից սահմանված համանման մեթոդաբանության /վերլուծությունը կատարվում է Վարկատուի կողմից և ներկայացվում այնպես, որ առանց որևէ դժվարության հասկանալի լինին 3-րդ անձի համար/, Այն դեպքերում, երբ վարկառուն/համավարկառուն միևնույն ժամանակ հանդիսանում է տվյալ կազմակերպության հիմնադիրը /սեփականատերը/ և տնօրենը /գործադիր մարմնի ղեկավարը/, ապա վերջինիս եկամուտները պետք է գնահատվեն Հավելված 1-ում ներկայացված մեթոդաբանությամբ, հակառակ դեպքում, եթե նա ներկայացնում է աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք, ապա տեղեկանքում նշված գումարը պետք է հավաստվի ներքոթվարկված տարբերակներից որևէ մեկով. • Կազմակերպության պաշտոնական՝ հարկային մարմինների կողմից հաստատված հաշվետվությունների վերլուծության միջոցով, կամ • ՀՀ Սոցիալական ապահովության ծառայությունից համապատասխան տեղեկանքի միջոցով: 17. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին: Գույքի վեաբերյալ փաստաթղթեր. 18. Հողամասի սեփականության վկայական, 19. Կառուցապատման թույլտվությունը, 20. Կառուցման օրենքով սահմանված կարգով հաստատված նախագիծը, 21. Կատարվելիք ծախսերի նախահաշիվ, 22. Կառուցապատման փուլերի նախագիծ /սահմանված ձևով/:
--	--